


ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԵՐԻՐԸ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵԶՍՈՒՄ

ՁԵՆՆԱՐԿ ԾՆՈՐԻ ՀԱՄԱՐ



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ՁԵՌՆԱՐԿ ԾՆՈՂԻ ՀԱՄԱՐ

Երևան - 2026

ՀՏԴ

ԳՄԴ

Ծնողավարության հիմնախնդիրը սոցիալական մանկավարժության համատեքստում: Ձեռնարկ ծնողի համար / Թաղևոսյան Հ.Վ.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. - Եր.: Էդիթ Պրինտ, 2026. - 50 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13.02.2026 թվականի 219-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Արսվյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Մնացականյան Լ.Ա.

Հեղինակ՝

Թաղևոսյան Հակոբ Վանիկի

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Գրախոսներ՝

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ.Յու.

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարությունյան Մ.Ռ.

Խմբագիր՝ Սարգսյան Հ.Ա.

Համակարգչային ձևավորում՝ Սարոյան Լ.Գ., Դավթյան Հ.Լ.

Սույն ձեռնարկի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժներին և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների մասնագետներին համընդհանուր ներառական կրթության իրականացման գործընթացում մանկավարժական և մեթոդական աջակցության տրամադրումն է:

ISBN

ՀՏԴ

ԳՄԴ



©Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	4
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	9
ԾՆՈՂ-ԵՐԵԽԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԾՆՈՂԻ՝ ՍՈՑԻԱԼ- ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ԳՐԱԳԵՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	34
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	48

ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ծնողավարությունը, տարբեր մասնագետների տեսակետների համաձայն, համարվում է անձի սոցիալականացման ինստիտուտներից կամ մեխանիզմներից հիմնականը, առաջնայինը: Ծնողավարության արդյունքում են ձևավորվում անձի նախնական վերաբերմունքը սոցիալական, բարոյական, իրավական նորմերի նկատմամբ, նրա արժեքային կողմնորոշումները, դիրքորոշումները, ինքնագիտակցությունը, ընդհանրապես այդ կերպ ապահովվում է նրա անձնային աճը:

Սոցիալական մանկավարժական գիտության տեսանկյունից ծնողավարությունը դիտարկվում է որպես անձի սոցիալականացման կամ, ինչպես ասում են, սոցիալական դաստիարակության նպատակաուղղված, պլանավորված գործընթաց, որի հիմնական նպատակը անձին հասարակական հարաբերություններում ակտիվորեն ներգրավելն է: Երեխայի անձի սոցիալականացման, անձնային աճն ապահովող առաջնային ինստիտուտ համարվում է ընտանիքը: Իհարկե, այստեղ ունենք որոշակի վերապահում, քանի որ ոչ միշտ է, որ ծնողները երեխաների անձի սոցիալականացման, ձևավորման նպատակով իրականացնում են պլանավորված ու նպատակաուղղված համալիր ներգործություն կամ, ինչպես ասում են՝ դաստիարակություն: Երեխայի հիմնարար իրավունքների հիման վրա ընդունված է առանձնացնել ծնողավարության երկու հիմնական բաղադրիչ՝ խնամք և ֆիզիկական անվտանգության ապահովում, սոցիալական

դաստիարակություն և անձնային աճի ապահովում: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով սահմանված հիմնարար իրավունքների մեծ մասը վերաբերում է երեխայի ընտանիքի պարտավորություններին.

- երեխաներն ունեն հատուկ հոգաճության և օժանդակության իրավունք,
- ընտանիքին՝ որպես հասարակության հիմնարար խմբային միավորի, և նրա բոլոր անդամների ու հատկապես երեխաների աճի ու բարեկեցության բնական միջավայրի, պետք է ցուցաբերվի անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն, որպեսզի կարողանա լիարժեք կերպով ստանձնել իր պարտականությունները հասարակության շրջանակներում,
- երեխան իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում,
- երեխան լիարժեք կերպով պետք է նախապատրաստվի հասարակության մեջ անհատական կյանքով ապրելուն և դաստիարակվի Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության մեջ հռչակված իդեալների և հատկապես խաղաղության, արժանապատվության, ազատության, հանդուրժողականության, հավասարության և համերաշխության ոգով,
- ըստ Երեխայի իրավունքների հռչակագրի՝ «երեխան, նկատի ունենալով նրա ֆիզիկական և մտավոր

անհասունությունը, կարիք ունի հատուկ պաշտպանության և հատուկ հոգատարության, ներառյալ՝ պատշաճ իրավական պաշտպանությունը ծնվելուց առաջ և հետո» (Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, 1989թ.):

Սոցիալական մանկավարժության տեսանկյունից ծնողավարության հիմնական գործառույթներն են .

1. խնամքի և պաշտպանական,
2. ձևավորող,
3. զարգացնող,
4. կրթական,
5. կանխարգելիչ-նախազգուշական,
6. սոցիալ-հուզական,
7. համագործակցային,
8. համակարգող,
9. խորհրդատվական,
10. կողմնորոշող,
11. իրազեկող:

Սոցիալական մանկավարժությունը դիտարկում է ծնողավարության չորս հիմնական ոճեր, որոնց դրսևորումների, հետևանքների մասին ծնողները պետք է իմանան իրենց ու երեխաների միջև հարաբերությունները գնահատելու, վերլուծելու և անհրաժեշտության դեպքում շտկելու համար: Դրանք են .

1. **Ավտորիտար ոճ**, որը ենթադրում է երեխաների հետ ուղղահայաց հարաբերություններ, հրահանգներ, խրատականություն, ինքնուրույնության, ազատության

սահմանափակում, խիստ վերահսկողություն, խստապահանջություն, ավելին՝ կարող են սահմանափակ լինել ծնողի (ծնողների) կողմից նաև սիրո, հոգատարության դրսևորումները: Արդյունքում երեխան կարող է դառնալ ինքնամփոփ, անվերապահորեն ենթարկված, իր կարծիքը չունեցող, ունենալ վախի զգացում, որը կարող է բերել առանձին դեպքերում նույնիսկ ագրեսիայի, իր անձի նկատմամբ թերաբժեքության: Երեխայի նման հոգեբանական և վարքագծային դրսևորումները կարող են արտահայտվել նաև ընտանիքից դուրս ձևավորվող հարաբերություններում:

2. **ժողովրդավարական ոճ**, որը ենթադրում է, որ *ծնող-երեխա* հարաբերություններում ձևավորվում են փոխըմբռնման, փոխվստահության, յուրաքանչյուրի կարծիքի նկատմամբ փոխադարձ հարգանքի մթնոլորտ: Երեխայի նկատմամբ հոգատարության, սիրո դրսևորումները ևս հավասարակշռության մեջ են խստապահանջության հետ: Արդյունքում երեխան ազատ է իր մտքերը, կարծիքը, զգացմունքները արտահայտելու հարցում, չի վախենում, որ դրա համար կպատժեն իրեն, քննարկում է իր խնդիրները ծնողի (ծնողների) հետ, ստանում խորհուրդներ, դառնում է ինքնավստահ, պատասխանատու, ձևավորվում է աղեկվատ ինքնագնահատական, հաղորդակցական կարողություններ, ինքնուրույնություն:

3. **Լիբերալ ոճ**, որն, ի տարբերություն ավտորիտար ոճի, *ենթադրում* է ծնողների կողմից երեխաների նկատմամբ ավելի քիչ վերահսկողություն և շատ ազատություն: Նման դեպքերում երեխաներին թույլատրվում է գրեթե ամեն ինչ. տրվում է լիարժեք ազատություն, ինքնուրույնություն, որոշումների կայացման հնարավորություն առանց ծնողների հետ խորհրդակցելու, քննարկելու: Արդյունքում հավանական է դառնում կարգապահության հետ կապված խնդիրների առաջացումը, ոչ ադեկվատ բարձր ինքնագնահատականի, մեծահասակների խորհուրդները չլսելու, դրանք ավելիոդ համարելու միտումների ձևավորումը: Իհարկե, պետք է փաստենք, որ ծնողավարության այս ոճի, երեխայի անհատական հոգեբանական առանձնահատկությունների արդյունքում հնարավոր է նաև իսկապես ինքնուրույն, ինքնաբավ, ստեղծագործ, նախաձեռնող անձի ձևավորումը:

4. **Անսթեռն կամ անփարբեր ոճ**, որը ենթադրում է, որ ծնողները չեն դրսևորում անհրաժեշտ ուշադրություն, հոգատարություն, շատ դեպքերում ուղղակիորեն անտեսում են երեխայի կարիքները, պահանջմունքները, չեն հետաքրքրվում նրա խնդիրներով, կարծես ներգրավված չեն լինում նրա կյանքում: Այդ ամենը կարող է ունենալ ամենատարբեր պատճառներ (օրինակ՝ մեծ զբաղվածությունը, ծանր աշխատանքը), ինչը կարող են փորձել փոխհատուցել երեխային շատ գումար տալով, թանկարժեք նվերներ գնելով: Այս դրսևորումը

հոգեբանության մեջ բնութագրվում է որպես կատարվածն անվավեր համարելու պաշտպանական հոգեբանական մեխանիզմ, երբ ծնողը կարծես ներողություն է խնդրում երեխայից բավարար ուշադրություն, ժամանակ չտրամադրելու համար: Արդյունքում կարող է առաջանալ ծնողից (ծնողներից) հոգեբանական օտարացում, մեկուսացվածություն, հուզական կապի պակաս, փոխըմբռնման, փոխվստահության մթնոլորտի բացակայություն, երեխան կարող է իրեն անտեսված զգալ: Մեր կարծիքով, երեխայի անտեսումը ևս կարելի է համարել նրա նկատմամբ բռնության դրսևորում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱՅՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Սոցիալական մանկավարժության, որպես մանկավարժական գիտության կիրառական ճյուղի ուսումնասիրության հիմնախնդիրներից մեկը երեխայի սոցիալականացման գործընթացն է ընտանիքում: Ընտանիքն այստեղ դիտարկվում է և՛ որպես ուսումնասիրության օբյեկտ, և՛ սուբյեկտ երեխայի հաջող սոցիալականացման ապահովման գործընթացում: Սոցիալական մանկավարժը ծնողներին դիտարկում է որպես սուբյեկտների երեխայի սոցիալականացման գործընթացում, որպես աջակցողների երեխայի հետ իր աշխատանքում:

Սոցիալական մանկավարժի աշխատանքը ծնողների հետ նպատակաուղղված է.

- ծնողավարության կարողությունների զարգացմանը,
- երեխաների տարիքային հոգեբանական և սոցիալ-մանկավարժական առանձնահատկությունների,
- երեխայի լավագույն շահի,
- երեխաների պաշտպանության,
- երեխայի սոցիալականացման մխանիզմների,
- ծնողավարության ոճերի, գործառույթների,
- երեխային ճանաչելու,
- երեխայի անձի զարգացման,
- երեխայի դաստիարակության մեթոդաբանության,
- սոցիալական խմբերում հաղորդակցման, վարքագծային դրսևորումների վերաբերյալ գիտելիքների ու հմտությունների,
- ընտանիքում նպաստավոր սոցիալ-հոգեբանական միջավայրի, առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը:

Առանձնացվում են ծնողների հետ սոցիալական մանկավարժի աշխատանքի մի քանի ուղղություններ.

1. տեղեկատվական-իրազեկող,
2. սոցիալ-կրթական,
3. սոցիալ-մանկավարժական կանխարգելիչ,
4. համագործակցություն և համայնքային աշխատանք,
5. խորհրդատվություն և շարունակական աջակցություն:

Ծնողների հետ աշխատանքում սոցիալական մանկավարժն իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները.

1. սոցիալ-մանկավարժական ախտորոշում՝ ուսումնասիրում է ընտանիքի սոցիալական կառուցվածքը, հարաբերությունների բնույթը, ծնողական ոճերը և ընտանիքի դաստիարակչական ռեսուրսները,
2. կանխարգելիչ՝ միջամտում է ընտանիքներում, որտեղ առկա են սոցիալական ռիսկեր՝ անփույթ վերաբերմունք, բռնություն, անտեսում,
3. սոցիալ-կրթական, իրազեկող՝ կազմակերպում է սեմինարներ, դասախոսություններ, ծնողական ակումբներ՝ ծնողական հմտությունների զարգացման նպատակով,
4. միջնորդական՝ օգնում է ծնողներին և երեխաներին վերականգնել փոխվստահության մթնոլորտը, կարգավորել հակասությունները,
5. համագործակցային՝ համագործակցում է հոգեբանի, ուսուցչի և համայնքային կառույցների հետ՝ ծնողների սոցիալական ինտեգրման համար,
6. աջակցող մեթոդական,
7. սոցիալ-մանկավարժական վերականգնողական,
8. սոցիալ-մանկավարժական շտկողական,
9. խորհրդատվական՝ ծնողներին տրամադրում է մասնագիտական խորհուրդներ՝ երեխայի վարքային, հուզական կամ կրթական խնդիրների լուծման համար,
10. վերլուծական-գնահատող:

Ծնողների հետ սոցիալական մանկավարժի աշխատանքի կազմակերպման հիմնական ձևերն են .

1. Խմբային, որի ընթացքում իրականացվում են՝

- ծնողների հետ առերես կամ առցանց հանդիպումներ, վեբինարներ, սոցիալական ցանցերի միջոցով տեղեկատվական արշավներ, տարբեր խնդիրների քննարկումներ (օրինակ՝ ծնողական ակումբների ձևաչափով), փորձի փոխանակում,
- թեմատիկ սեմինարներ, թրեյնինգներ, վարպետության դասեր, դերային խաղեր, մոդելավորման մեթոդով զարգացնող պարապմունքներ, որոնք վերաբերում են երեխայի կյանքում ծնողների դերին, մանկության ժամանակակից հիմնախնդիրներին, երեխայի տարիքային հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, զարգացման առանձնահատկություններին, երեխայի հետ հարաբերությունների, հաղորդակցման սոցիալ-հոգեբանական կողմերին, ծնողական պարտականություններին, պատասխանատվությանը, սոցիալականացման ռիսկերին, դրանց կանխարգելման, հաղթահարման հնարավոր մեխանիզմներին:

2. Անհատական, որի ընթացքում սոցիալական մանկավարժն իր նախաձեռնությամբ կամ ծնողի խնդրանքով իրականացնում է՝

- անհատական խորհրդատվություններ, որոնք վերաբերում են ծնող-երեխա կոնկրետ հարաբերություններին, առաջացած դժվարություններին,

- կրթական - զարգացնող զրույցներ, որոնք վերաբերում են ծնողավարության համապատասխան կարիքների բացահայտմանը, դրանց գնահատման հիման վրա անհատական կարողությունների զարգացմանը,
- սոցիալ-մանկավարժական վերականգնողական և շտկողական աշխատանքներ կոնկրետ ընտանիքներում, որոնք իրականացվում են տնայցերի, ծնողների կողմից սոցիալական մանկավարժի աշխատավայր այցերի, ինչպես նաև առցանց ձևաչափով (համացանցի, հեռախոսազրույցի միջոցով),
- իրազեկող աշխատանքներ (առերես և առցանց ձևաչափով):

3. Մասնակցային - ներառական, որի ընթացքում իրականացվում են.

- ծնողների մասնակցությամբ նախագծեր, միջոցառումներ՝ ուղղված ընտանիք-դպրոց-համայնք համագործակցությանը, հասարակական և պետական կառույցների հետ համատեղ ծրագրեր,
- ծնողների ներգրավում դպրոցի ինքնակառավարման մարմիններում,
- կամավորական նախաձեռնություններ, սոցիալական նախագծեր ծնողների ներգրավվածությամբ նրանց սոցիալական ակտիվության խթանման նպատակով:

Սոցիալական մանկավարժի աշխատանքը ծնողների հետ, որպես կանոն, իրականացվում է որոշակի փուլերով.

1. դիագնոստիկ-վերլուծական կամ տեղեկատվության հավաքագրման փուլ, որի ընթացքում սոցիալական մանկավարժն ուսումնասիրում է ընտանիքի սոցիալական կարգավիճակը, միջանձնային հարաբերությունները, ծնողավարության կարողությունները, ոճը, երեխայի (երեխաների) սոցիալականացման առանձնահատկությունները, ծնողների հոգեբանական բնութագիրը, կրթական ցենզը, արժեքային կողմնորոշումները,
2. խնդրի (խնդիրների) ձևակերպում, որը ենթադրում է, որ սոցիալական մանկավարժը հավաքագրված տվյալների հիման վրա վեր է հանում ծնող-երեխա հարաբերություններում առկա խնդիրները, երեխայի սոցիալականացման դժվարությունները, գնահատում ծնողավարության կարողությունների կարիքը,
3. նախագծման ու պլանավորման փուլ, որի ընթացքում սոցիալական մանկավարժը 1-ին և 2-րդ փուլերի արդյունքների հիման վրա նախագծում է բացահայտված խնդիրների լուծման, գնահատված կարիքին համապատասխան աջակցությանն ուղղված ծրագիր, հստակեցնում ծրագրի իրականացման գործողությունների հաջորդականությունը, ժամանակացույցը, պատասխանատուներին, կանխատեսվող արդյունքները, հնարավոր ռիսկերը, մեթոդները, ձևաչափը,
4. իրականացման փուլ, որը ենթադրում է պլանավորված գործողությունների անմիջական իրականացում մշակված

ծրագրին համապատասխան, ընտրված մեթոդների, ձևերի կիրառում,

5. փորձաքննության և գնահատման փուլ, որը ենթադրում է մշակված ծրագրի, պլանավորված գործողությունների իրականացման մշտադիտարկում, ընթացքի և արդյունքների գնահատում, ձևակերպված նպատակի և ձեռքբերված արդյունքների համեմատական վերլուծություն, սխալների, բացթողումների գնահատում, դրանց պատճառների վերլուծություն և շտկման ծրագրի մշակում:

Ծնողների հետ սոցիալական մանկավարժի կողմից իրականացվող վերոնշյալ աշխատանքների ընթացքում, հնարավոր է, դրսևորվեն որոշակի ռիսկեր՝ պայմանավորված ինչպես ծնողների, այնպես էլ սոցիալական մանկավարժի հանգամանքով.

- ոչ բավարար վստահություն ծնող-սոցիալական մանկավարժ հարաբերություններում,
- ծնողի (ծնողների) ոչ բավարար իրազեկվածությունը,
- ծնողի (ծնողների) կողմից պաշտպանական դիրքավորում սոցիալական մանկավարժի հետ աշխատանքում, իրականությունը օբյեկտիվ չընդունելու, նույնիսկ իրականության ժխտման հոգեբանական պաշտպանական մեխանիզմի առկայություն (չի ընդունում խնդիրների առկայությունը, ավելին՝ դրանց առաջացման համար մեղադրում է դպրոցին, ուսուցչին, սոցիալական մանկավարժին),

- երեխայի հետ ծնողի (ծնողների) աշխատանքի ոչ բավարար փորձը,
- ծնողի (ծնողների) կրթական ցենզը, արժեքային կողմնորոշումները, դիրքորոշումները, ինչը կարող է հանգեցնել տարածայնությունների սոցիալական մանկավարժի հետ աշխատանքում,
- ծնողի (ծնողների) զբաղվածությունը, որի արդյունքում նրանք չեն ունենում բավարար ժամանակ երեխայի հետ հաղորդակցվելու համար,
- ընտանիքի սոցիալական անապահովությունը և դրանով պայմանավորված՝ ծնողի (ծնողների) զբաղվածությունը,
- մշակութային և ենթամշակութային առանձնահատկությունները, որոնք կարող են ստիպել ծնողին (ծնողներին) չբարձրաձայնել իրենց երեխայի խնդիրների մասին,
- սոցիալական մանկավարժի կողմից իր մասնագիտական էթիկայի կանոնները չպահպանելը (օբյեկտիվություն, անաչառություն, գաղտնիություն, հուզական տարածություն),
- սոցիալական մանկավարժի կողմից իր մասնագիտական լիազորությունները չարաշահելը,
- սոցիալական մանկավարժի մասնագիտական ոչ բավարար պատրաստվածությունը, փորձի պակասը,
- կենսական դժվար իրավիճակում հայտնված, հատկապես սոցիալապես անապահով ընտանիքներում ծնող/ների անվստահությունը պետական կառույցների աշխատակից

մասնագետների, այդ թվում՝ սոցիալական մանկավարժի նկատմամբ,

- սոցիալական մանկավարժի մեծ ծանրաբեռնվածությունը, որը հնարավորություն չի տալիս բավարար ծավալով աշխատել յուրաքանչյուր ընտանիքի հետ,
- ընտանիք-դպրոց-համայնք չկանոնակարգված հարաբերությունները:

Վերոնշյալ ռիսկերը կառավարելու համար սոցիալական մանկավարժը պետք է կարողանա.

- ձևավորել ինքնաճանաչման ու ինքնագնահատման զարգացած կարողություններ ադեկվատ ինքնագնահատականի ձևավորման նպատակով,
- օբյեկտիվ գնահատել մասնագիտական կարիքները,
- դրանց հիման վրա մասնագիտական կարողունակությունների աճ ապահովել շարունակական վերապատրաստումների, ինքնակրթության և սուպերվիզիայի միջոցով,
- զարգացնել անձնային որակները,
- խստորեն պահպանել էթիկայի նորմերը մասնագիտական աշխատանքում,
- սոցիալ-հուզական ուսուցման արդյունքում զարգացնել սեփական հոյզերի կառավարման, ինքնավերահսկման կարողություններ,
- հարգալից վերաբերմունք դրսևորել ծնողի (ծնողների) նկատմամբ,

- հանգիստ, անկեղծ շփումներ ձևավորել առաջին իսկ հանդիպումների ընթացքում,
- լսել ծնողին, չընդհատել նրան, չքննադատել, փորձել հասկանալ,
- կառավարել, վերահսկել սեփական հույզերը նույնիսկ այն դեպքում, երբ ծնողը դրսևորում է որոշակի հուզականություն, օրինակ՝ ագրեսիա, մերժողականություն,
- դրսևորել չափավոր ապրումակցում,
- երեխայի հետ կապված խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սոցիալ-մանկավարժական առաջարկները, երաշխավորությունները ներկայացնել պարզ, հասկանալի ձևով, չօգտագործել մասնագիտական եզրույթներ, որոնք անհասկանալի կլինեն ոչ մասնագետ ծնողներին,
- հետագա անելիքների, հանդիպումների պարբերականության, ձևաչափի և ակնկալիքների վերաբերյալ պայմանավորվածություններ ձեռք բերել,
- կարևորել ծնողի (ծնողների) դերը երեխայի խնդիրների լուծման գործընթացներում, խթանել նրանց մասնակցայնությունը,
- ծնողի (ծնողների) հետ աշխատանքի իրենց նախկին փորձի վերլուծություն իրականացնել, կանխատեսել հնարավոր զարգացումները, մշակել դրանց համապատասխան ռազմավարություններ, մարտավարություններ և գործողություններ, մոդելավորել տարբեր իրավիճակներ և վերանայել նախկինում ունեցած փորձը:

Ծնողավարության որակի բարձրացման, ծնող-երեխա հարաբերությունների բարելավման նպատակով կարևոր ենք համարում ծնողներին իրազեկել տարիքային հոգեբանական առանձնահատկությունների մասին, որոնք բնորոշ են ժամանակակից երեխային: Դրանք իսկապես փոփոխությունների են ենթարկվել 21-րդ դարում և շարունակում են ինտենսիվորեն փոփոխվել: Կարևոր է ծնողների համար պարզել, թե ինչպիսի փոփոխություններ են եղել երեխայի անձի իմացական ոլորտում, մասնավորապես՝ մտածողության, հիշողության, երևակայության, ուշադրության, ընկալման որակներում, հոգեֆիզիոլոգիական, սոցիալականացման ինչպիսի փոփոխություններ են տեղի ունենում նրա զարգացման տարբեր փուլերում: 21-րդ դարում աշխարհի հարափոփոխելիությունը, տեխնոլոգիականացումը արագացրին զարգացման տեմպերը: Ելնելով դրանից՝ գիտության կողմից անձի զարգացման տարիքային առանձնահատկությունները և դրանցով պայմանավորված կրթության համակարգի, մանկավարժական գործընթացի մեթոդաբանությունը ևս պարբերաբար, նույնիսկ յուրաքանչյուր հինգ տարին մեկ փոփոխությունների կարիք ունեն: «Քանի որ մանկությունը, որպես բարդ համակարգ, որում ձևավորվում է աճող մարդը, այսօր գործում է սկզբունքորեն նոր պատմական իրավիճակում և ենթարկվում է նոր, չափազանց խորը և լուրջ փոփոխությունների, հրատապ անհրաժեշտություն է ընդլայնված ծրագրի մշակումը» (Фельдштейн, 2009):

Հետազոտությունները փաստում են, որ ընդհանուր զարգացման տեմպերով, հոգեբանական նորազոյացությունների քանակով, դրանց դրսևորումների առանձնահատկություններով, ընդհանրական կարողունակություններով 21-րդ դարի երեխաներն առաջ են անցել նախորդ սերունդների իրենց հասակակիցներից: Սակայն այստեղ, մեր կարծիքով, նպատակահարմար չէ միանշանակ դրական գնահատել այդ փոփոխությունները (Геворкян, 2023):

Վերոնշյալ հետազոտական աշխատանքներն իրականացրել ենք հանրակրթական դպրոցներում, բուհերում, որոնց մասնակցել են տարբեր տարիքային խմբերի 200 դպրոցականներ, 100 ուսուցիչներ, 50 մասնագետ-մանկավարժներ: Հետազոտությունն իրականացվել է դիտման, հարցազրույցի, հարցաթերթի, թեստերի մեթոդներով: Մասնավորապես, օգտագործվել են Ի. Լ. Սոլովինի «Իմ կյանքի ճանապարհը», «Ազատ պատմություններ», Ա. Մ. Պրիխոժանի «Դպրոցական տազնապայնություն», Ռ. Կետտելի բազմագործոն անձնային մեթոդիկաները:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հոգեբանական բնութագրերում առկա են փոփոխություններ, որոնք չեն կարող գնահատվել որպես դրական: Տարրական դպրոցում սովորողների կրթական վերջնարդյունքները, ուսումնառության ձեռքբերումները ևս նախորդ դարի համեմատ նվազել են որակական առումով: Օրինակ՝

- ուսման մոտիվացիան նվազել է (հետազոտությանը մասնակցած ուսուցիչների 90%-ի կարծիքով),

- առկա են ուշադրության կենտրոնացման, հիշողության դժվարություններ (հետազոտությանը մասնակցած ուսուցիչների 82%-ի կարծիքով),
- ավելացել են հոգեկան գործընթացների, հույզերի, զգացմունքների ներդաշնակ և երեխայի անձի ձևավորման տեսանկյունից բարենպաստ զարգացման դժվարությունները,
- գրելու կարողությունը բավարար մակարդակով չի ձևավորվում տարրական դպրոցում,
- մեծ տոկոս են կազմում տեքստը սահուն կարդալու դժվարություններ ունեցող երեխաները,
- ավելացել են կարդացվող տեքստն ամբողջական ընկալելու, ըմբռնելու և վերարտադրելու դժվարությունները,
- ի տարբերություն նախորդ դարի՝ 0,5-1 տարով երկարաձգվել են ավագ նախադպրոցական տարիքին բնորոշ հոգեբանական առանձնահատկությունների դրսևորումները, որը պետք է հաշվի առնել տարրական դպրոցում իրականացվող կրթության գործընթացում:

Համեմատական անցկացնելով 1990-ական թվականների հետ՝ ներկայացնենք դեռահասության տարիքում վերջին տարիներին դրսևորվող հոգեբանական մի քանի առանձնահատկություններ, որոնք առաջ են բերում մասնագետների, ծնողների մտահոգությունը.

- փոփոխություններ սոցիալական զարգացման գործընթացում,

- հաղորդակցման կարողությունների ցածր զարգացվածություն,
- հաղորդակցման ու դրական, մեղմ հուզականության պայմաններում զվարճանալու մոտիվացիայի պակաս,
- կամային որակների՝ համառության, հաստատակամության, հոգեկան տոկունության ձևավորման աճի միտում, որոնք չափից ավելի զարգանալու դեպքում դժվարություններ են ստեղծում միջանձնային հարաբերություններում, տարբեր միջավայրերում հարմարվելու գործընթացում,
- հանդուրժողականության, ապրումակցման, կարեկցանքի, այլասիրության մակարդակի, դիմացինի իրավունքների նկատմամբ հարգանքի նվազում,
- ինքնահաստատման, ինքնաիրացման, ինքնադրսևորման և միջավայրում ինքնաներկայացման պահանջմունքի ընդգծվածություն և կարևորում,
- մենակության ձգտում, որը թեև 1990-ականներին ևս դրսևորվել է, սակայն այսօր առկա է որոշակի փոփոխություն՝ այն դրսևորվում է պարբերաբար, նույնիսկ ընտանիքում, ավելացել է տագնապայնությունը,
- մեծահասակների կողմից լքվածության զգացում, նրանց նկատմամբ քննադատականության ավելացում,
- միևնույն ժամանակ, խնդիրներն ինքնուրույն լուծելու կարողության բացակայություն, այդ հարցերում ծնողներից կախվածություն,

- հեռավար հաղորդակցումը առերես շփումներից գերադասելը,
- սոցիալականացում սոցիալական ցանցերի միջոցով,
- ընտրության ազատության նկատմամբ վախ (Онлайн-рекурс «МЕР»),
- հույզերն արտահայտելու ցածր մշակույթ,
- կայուն հուզական կապեր ստեղծելու ցանկության և կարողության բացակայություն,
- հետաքրքրությունների ծայրահեղ բազմազանություն, անկայունություն,
- անօգնականության զգացում, դրա արդյունքում հուզական տագնապայնություն, որևէ մեկի վրա հենվելու, աջակցություն ստանալու ընդգծված մղում,
- կյանքի իմաստի որոնման ուղղությամբ սևեռում, ընդ որում՝ իրատեսական մեծ սպասումներով, սակայն չեն ուզում դանդաղ, փոքր քայլերով գնալ դեպի նպատակը,
- ուսման փոխարեն ժամանակից շուտ վարձատրվող աշխատանքով զբաղվելը,
- իր ես-ը, ֆիզիկական կերպարը, արտաքին տեսքը, կազմախոսական որակները, առողջությունը գերկարևորելու միտում,
- ընդգծված եսակենտրոնություն, եսասիրություն,
- իմացական գործընթացների՝ մտածողության, ընկալման, հիշողության, ուշադրության որակական փոփոխություններ,
- էկրանային կախվածություն,

- կլիպային մտածողություն, որը ենթադրում է մտածողության գործառնությունների՝ վերլուծության, համեմատության, համադրության կարողությունների նվազում, տեղեկատվության նկատմամբ ոչ քննադատական վերաբերմունք,
- ընկալման արդյունավետություն՝ պայմանավորված հիմնականում կարճ և պատկերային տեղեկատվությամբ,
- խաղային մտածողություն, որին նպաստում են էլեկտրոնային, համակարգչային խաղերից կախվածությունը, երբ նրանց մտածողությունը, ստեղծագործականությունը, ինքնուրույնությունը թուլանում են, ավելին՝ նրանք հանդես չեն գալիս իրենց իրական եսով,
- ֆորմալ կրթության նկատմամբ անհետաքրքրությունը և հակառակը՝ ոչ ֆորմալ կրթությանը և ինքնակրթությանը հակվածությունը, նստակյաց վարքագիծը ի տարբերություն նախորդ դարի սերնդի (<< կառավարություն, 02.09.2016 N 34 Արձանագրային որոշում, Геворкян, 2023):

Շեռագոտությանը մասնակցած 100 ուսուցիչների, 50 մասնագետ-մանկավարժների 82%-ը նշում է, որ ժամանակակից երեխաները ունենում են ուշադրությունը կենտրոնացնելու, 71%-ը՝ իրենց ուղղված բանավոր խոսքը ճշգրիտ ընկալելու, ուսումնական նյութը մտապահելու, 56%-ը՝ մտքերն ու հույզերը բանավոր խոսքով հստակ արտահայտելու, 67%-ը՝ ուսումնական հաստատություններում կարգապահական նորմերին հետևելու դժվարություններ և 90%-ը՝ ուսումնական մոտիվացիայի

խնդիրներ: Վերոնշյալին զուգահեռ, հետազոտությանը մասնակցած ուսուցիչները նշում են, որ ժամանակակից երեխայի մտածողությունն ինքնուրույն է, որը հնարավորություն կարող է տալ ապահովել բարձր առաջադիմություն: «McCrinkle» հետազոտական հեղինակային կենտրոնը 1995-2009 թվականներին ծնված սերունդն անվանում է «Y» («McCrinkle» հետազոտական հեղինակային կենտրոն), հոգեբան ժան Տվենգեն՝ «iGeneration» (1995-2012 թվականներին ծնվածներ) սերունդ: Ընդունված է համարել, որ «Z» սերունդը «X» սերնդից ծնված երեխաներն են, որոնք իրականում թվային սերնդի ներկայացուցիչներն են: Ըստ Կ. Սիմիլլերի և Մ. Գրեյսի՝ «Z» սերնդին բնորոշ են.

- ավելորդ թվային կապերը,
- ավելի քիչ են հակված ռիսկի և «ապստամբության»,
- գտնվում են ծնողների և հասակակիցների ազդեցության տակ,
- անհանգիստ են ու զբաղված տարատեսակ խնդիրներով,
- բաց են նորի համար և պատասխանատու,
- ձգտում են հաջողության,
- նախաձեռնող են և հնարամիտ,
- քաղաքականությամբ չեն հետաքրքրվում,
- տրամադրված են հասարակությունը փոխելու,
- սովորում են ինքնուրույն,
- տարբեր սոցիալական շրջանակների մաս են կազմում,
- սոցիալական առումով ազատական են,

- ֆինանսական առումով՝ չափավոր մինչև պահպանողականության աստիճան,
- սովորելու համար օգտագործում են YouTube-ը,
- ունեն նկարների միջոցով հաղորդակցվելու ունակություն,
- վախենում են ուրախություն չբերող աշխատանքի մեջ «խրվելուց»,
- զգուշանում են իրենց ֆինանսական անվտանգության համար,
- սեփական ինքնության համակարգողներ են (Seemiller, Grace, 2015):

«McCrinkle» հետազոտական հեղինակային կենտրոնը 2010-2024 թվականների ծնունդներին անվանում է «Alpha» սերունդ: Ըստ վերոնշյալ հետազոտական կենտրոնի՝ այս նոր սերունդը նախորդներից տարբերվում է նրանով, որ այն նոր, ապագայի սերունդ է՝ նոր որակներով, հոգեբանական նորագոյացությունների մեծ քանակով: Եթե ավելի պատկերավոր ասենք, նրանք *նորի սկիզբ* են:

Մանկավարժական գործունեության տեսանկյունից սա լուրջ ազդակ է, հուշում, որ չի կարելի չընդունել, առավել ևս՝ հաշվի չնստել այդ իրողության՝ նոր որակի սերնդի հետ, ավելին, գիտակցել, որ հնարավոր չէ նախորդ սերունդների հետ աշխատելու մեթոդաբանությամբ հաջողության հասնել «Alpha»-ի հետ: Թեև Հանրակրթության պետական չափորոշչով սահմանվում են սովորողների անձնային, արժեքային կոմպետենցիաներ, որոնք ենթադրում են նպատակային, պլանավորված և համակարգված դաստիարակության

գործընթաց, այնուամենայնիվ, չկան ներդրված գործիքներ, մեթոդիկաներ, որոնք հնարավորություն կտան չափելու դաստիարակության արդյունքները, անձնային առանձին որակներ: Անհրաժեշտ է մշակել մանկավարժական գործունեության նոր մեթոդաբանություն, որտեղ հաշվառված կլինեն 21-րդ դարի այդ սերնդի հոգեբանական զարգացման առանձնահատկությունները:

Մանկավարժական և հոգեբանական գիտությունների համար կարևոր հիմնահարց է նաև 21-րդ դարում անձի զարգացման օրինաչափությունների, հոգեբանական նորագոյացությունների վերաբերյալ բացահայտված գիտական տեղեկատվությունն օգտագործել՝ ծնող-երեխա փոխհարաբերությունների կարգավորմանն ուղղված նոր մեթոդաբանություն, նոր երաշխավորություններ մշակելու համար: Այստեղ առավել շեշտադրելի են ժամանակակից հարափոփոխ աշխարհում զարգացման այլ դիթմ և հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններ ունեցող երեխաների հետ ծնողների հարաբերությունների բնույթը, երեխայի նկատմամբ ծնողների վերաբերմունքը, դրսևորվող հուզականությունը:

Ժամանակակից սոցիալ-տնտեսական ծանր իրողություններով, հասարակության մեջ առկա արժեքային անկումներով, բարձր սթրեսայնությամբ պայմանավորված՝ ծնողների մի մեծ խումբ չի դրսևորում երեխաների նկատմամբ պատշաճ ուշադրություն, հոգատարություն, չի հատկացնում անհրաժեշտ ժամանակ նրանց հետ շփումների համար և, ինչպես

ասում են, դրսևորում է ծնողական ցածր մոտիվացիա: Ավելին, իրենց կարիերայում, միմյանց հետ հարաբերություններում, ընտանիքի ֆինանսական խնդիրների պատճառով ծնողներն ունենում են բացասական հուզականություն, ագրեսիվություն, տագնապայնություն, և այդ հոգեվիճակը մեխանիկորեն արտահայտվում է երեխաների հետ փոխհարաբերություններում՝ կոպտում են երեխաներին, աղեկվատ չեն արձագանքում խնդրանքներին, չեն բավարարում երեխաների՝ իրենց հետ շփվելու, սիրո, հոգատարության պահանջմունքները: Այստեղ շատ դեպքերում ծնողները դրսևորում են ինքնապաշտպանական հոգեբանական մեխանիզմ, որն անվանում են կատարված անվավեր համարելու մեխանիզմ: Վերջինիս էությունն այն է, որ ուշադրություն չդարձնելով երեխային, ծնողները կարող են փորձել, օրինակ՝ թանկարժեք հեռախոս գնել ու նվիրել երեխային, վճարել դպրոցից դուրս նրա ուսումնական պարապմունքների համար: Այս կերպ ծնողները կարծես ցանկանում են ներողություն խնդրել իրենց անտարբերության համար: Այստեղ վտանգավոր է դառնում այն հանգամանքը, որ առանձին ընտանիքներում, առանձին ծնողների և երեխաների միջև դրսևորվող այդ երևույթը, գումարվելով, հասարակության մեջ ձեռք է բերում նոր որակ, դառնում է մեծ տարածում ունեցող երևույթ: Վերջինս կարող ենք բնութագրել որպես մանկության և մեծահասակների աշխարհի միջև անջրպետ, երբ երեխայի սոցիալականացման գործընթացում ծնողները, մեծահասակները նշանակալի, ակտիվ դերակատարություն չեն ունենում, չեն դառնում սոցիալականացման ակտիվ գործակալներ, չեն

նպաստում երեխաների՝ միջանձնային հարաբերություններում հասունությանը: Այս ամենի արդյունքում երեխաները կարող են դառնալ ինքնամփոփ, տագնապային, չեն կարողանում ինքնահիրացվել, իջնում է նրանց ինքնագնահատականը, սեփական ուժերի նկատմամբ ինքնավստահությունը: Նրանք սկսում են չվստահել նաև ծնողներին, ուսուցիչներին, մեծահասակներին ընդհանրապես: Արդյունքում կարող է դանդաղել մանկությունից պատանեկություն, հասունություն անցնելու հոգեբանական ընկալման շրջափուլը: Ծնողների կողմից երեխայի անձնային աճի նպատակով բարենպաստ պայմաններ, միջավայր չապահովելը շատ դեպքերում չի լրացվում, չի փոխհատուցվում նախադպրոցական կրթական հաստատության, դպրոցի կողմից: Վերջին տասնամյակներում ամենուր խոսվում է ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման, բարեփոխումների մասին: Սակայն, ըստ էության, սովորողների անձի ձևավորման, անձնային աճի ապահովման, դաստիարակության գործընթացը անտեսվում է: Թեև Հանրակրթության պետական չափորոշչով սահմանվում են սովորողների անձնային, արժեքային կոմպետենցիաներ, որոնք ենթադրում են նպատակային, պլանավորված և համակարգված դաստիարակության գործընթաց, այնուամենայնիվ, չկան ներդրված գործիքներ, մեթոդիկաներ, որոնք հնարավորություն կտան չափելու դաստիարակության արդյունքները, անձնային առանձին որակներ:

Ի տարբերություն նախորդ դարի վերջին և 21-րդ դարի առաջին տասնամյակների՝ այսօր մանկության վրա մեծ, եթե ոչ

ամենամեծ, ազդեցությունն ունեն տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները, համացանցը: Երեխաներն օրվա մեջ բավական մեծ ժամանակ են անցկացնում համացանցում, անկախ նրանից՝ ուսումնառությունը, ուսումնական առաջադրանքների կատարումը կապված են համակարգչի, համացանցի հետ, թե ոչ:

Համացանցի, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների լայն տարածումն իսկապես փոխեց աշխարհը: Ի հայտ եկան տեղեկատվության փոխանցման նոր մեխանիզմներ, նոր արագություն, նոր ծավալներ: Տարածության և ժամանակի մեջ, ըստ էության, չկան այլևս տեղեկատվության փոխանցման սահմանափակումներ: Հասարակությունն այլևս չի պատկերացնում իր կյանքն առանց տեղեկատվական տեխնոլոգիաների, համացանցի: «Համացանցի ռեսուրսները իրենցից ներկայացնում են նոր մշակութային միջոցներ, որոնք միջնորդում են ժամանակակից մարդու կենսագործունեությունը և կարող են ազդել ոչ միայն նրա անհատականության, այլև նրա բարձրագույն հոգեկան գործառույթների վրա» (Мудрик, 2009): Համացանցը, իր դրական կողմերով հանդերձ, կարող է երեխայի անձի վրա ունենալ նաև բացասական ազդեցություն, օրինակ՝ համացանցից երեխայի կախվածությունը: Համացանցում երկար ժամանակ անցկացնելը, ագրեսիվ խաղերը կարող են թողնել իրենց բացասական հետևանքները (Թոփուզյան, 2018):

Փոխվել է երեխայի անձի սոցիալականացման գործընթացի դիմանկ, ուղղությունը: Երեխաները համացանցի միջոցով հաղորդակցվում են միմյանց հետ, օգտագործում այն

կրթական նպատակներով, ժամանցի համար, տեղեկատվություն ստանալու նպատակով: Համացանցի միջոցով շփումներում սկսեցին ավելի շատ օգտագործել նշաններ, քան բառեր, նախադասություններ: Նույնիսկ իրենց հույզերը սկսեցին արտահայտել նշաններով: Արդյունքում դժվարանում է նրանց խոսքի, երկար տեքստեր ընթերցելու կարողության զարգացումը, նախադասություն կազմելու, հույզերն արտահայտելու հմտությունների ձևավորումը: Փոխվել են տեղեկատվություն ստանալու աղբյուրները, ձևը. խոսքը, բառը լսելու փոխարեն կարդում են, տեսնում նշաններ, սիմվոլներ: Արդյունքում առաջանում են խոսքի ադեկվատ ընկալման, ըմբռնման, սեփական մտքերն արտահայտելու, վերբալացնելու խնդիրներ: «Ակնհայտորեն, մենք կարող ենք խոսել ժամանակակից հասարակության մեջ երեխայի կյանքում սկզբունքորեն նոր սոցիալ-մշակութային դարաշրջանի մասին, որի տարբերակիչ առանձնահատկություններն են սոցիալականացման նոր, ոչ դասական ինստիտուտների առկայությունը, մանկության անկախ կարգավիճակի կորուստը մեծերի աշխարհում և փոփոխվող սահմանները, որոնք բաժանում են երեխաների աշխարհը մեծերի աշխարհից» (Князева, 2020): Ուսումնական գործընթացում ևս համացանցը, տեղեկատվական տեխնոլոգիաները հանգեցրին մեծ փոփոխությունների: Երեխային չի հետաքրքրում տպագիր գիրքը, նրանում պատկերված ոչ շարժական, գունային առումով ոչ պայծառ նկարը, տեքստի հետ աշխատելը, քանի որ դրանցում չկա ռիթմ, արագություն, պայծառ գույներ, փոփոխվող պատկերներ, ձայն:

Ի տարբերություն տպագիր գրքերի՝ դրանք առկա են համացանցում համակարգչային, հեռախոսային հասանելիությամբ, որոնց վրա հեշտությամբ կենտրոնանում է երեխայի ոչ կամաձին ուշադրությունը, որը ավանդական դասագործընթացում դժվարանում է, դանդաղում: Արդյունքում երեխայի մտածողությունը դառնում է, ինչպես ասում են՝ կլիպային: Ահա սա է պատճառը, որ ուսումնական գործընթացում անհրաժեշտ է տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաները, համացանցը օգտագործել նպատակաուղղված, պլանավորված և համակարգված ձևով: Էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների՝ մանկավարժահոգեբանական տեսանկյունից նպատակահարմար օգտագործումը կարող է լուծել այդ խնդիրը՝ խթանել ուսումնական մոտիվացիայի ձևավորումը, տարրական դպրոցում սովորողների կամաձին ուշադրության, տեսողական և լսողական զգայությունների, ընկալումների զարգացումը: Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները, համացանցը, սոցիալական ցանցերը երեխաների համար իսկապես կարող են դառնալ և դառնում են ոչ իրական, այլ վիրտուալ սեփական աշխարհի ստեղծման հիմք: Նրանք ստեղծում են իրենց վիրտուալ ընկերությունը, իրենց էտալոնային, բայց միաժամանակ ոչ իրական խումբը: Արդյունքում նրանք դժվարություններ են ունենում իրական կյանքում, առերես շփումներում, «ինքնաիրացվում» են վիրտուալ կյանքում, համացանցում, փոխհատուցում են իրենց այն պահանջմունքների բավարարման անհնարինությունը, որոնք

իրական կյանքում չեն կարողանում բավարարել: Ավելին, շատ դեպքերում երեխաները համացանցում, սոցիալական ցանցերում հանդես են գալիս նույնիսկ ոչ իրենց անձով, այլ մտացածին անուններով, ազգանուններով, կերպարով: Ըստ էության, համացանցը լի է երեխայի անձի սոցիալականացմանը, անձնային աճին, առողջ հոգեկան զարգացմանը սպառնացող վտանգներով՝ ագրեսիա, բռնություն, դավաճանություն, տրավմաներ: Շատ երեխաներ ունենում են նաև համացանցից կախվածություն: Վերջինս, ըստ էության, դառնում է վարքագծային խանգարման դրսևորում, քանի որ խանգարվում են նրանց օրվա ռեժիմը, քունը, ախորժակը, տրամադրությունը, ուսումնառության մակարդակը, ավելանում են տազնապայնության մակարդակը, ագրեսիվությունը, հաղորդակցման դժվարությունները:

Ժամանակակից կրթության համակարգում կարևորվում է ներառական կրթության մեթոդաբանության զարգացումը: ՀՀ-ում կրթության ոլորտի պետական քաղաքականության ուղղություններից մեկը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործընթացի արդյունավետության բարձրացումն է: Աշխարհում նկատվում է նաև երեխաների հիվանդացությունների աճ, որը ևս անհրաժեշտ է կարևորել կրթության համակարգի զարգացմանն ուղղված գործընթացներում: Բերենք մեկ օրինակ. 2015 թվականի համեմատ (ՀՀ կառավարություն, 2016) ՀՀ-ում նյարդահոգեկան հիվանդություններ ունեցող հաշմանդամ երեխաների թիվն աճել

է՛ 46%-ից դառնալով 52,6% (Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 2022):

**ԾՆՈՂ-ԵՐԵՆԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ
ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԾՆՈՂԻ՝ ՍՈՑԻԱԼ-
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ԳՐԱԳԵՏ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ**

ԻՐԱՎԻՃԱԿ 1.

Երեխայի տարիքը՝ 4 տարեկան

Դժվարությունը՝ Երեխան հրաժարվում է խաղից հետո հավաքել խաղալիքները, սկսում է լացել, գոռալ և նետել խաղալիքները:

Սա այս տարիքին բնորոշ նորմալ վարք է, քանի որ.

- Երեխան դեռ զարգացնում է ինքնակարգավորման հմտությունները:
- Գտնվում է զարգացման «**ես ինքս**» փուլում:
- Դժվարանում է անցում կատարել հաճելի գործունեությունից դեպի պարտադիր գործողություն:

Ծնողի ոչ գրագետ արձագանքի օրինակ (ինչից խուսափել)

- «Քանի անգամ ասեմ, հավաքի՛ր»
- «Եթե չհավաքես, էլ խաղալիք չես ստանա»
- Ձայնը բարձրացնել, շտապեցնել
- Երեխայի զգացմունքները անտեսել

Այս մոտեցումը ուժեղացնում է դիմադրությունը և ձևավորում վախի վրա հիմնված հնազանդություն:

Սոցիալ-մանկավարժական տեսանկյունից ծնողի գրագետ վարք

1. *Ծնողը նախ անվանում է երեխայի զգացողությունը, ոչ թե դատարարում վարքը:*

«Տեսնում եմ, որ շատ ես ուզում շարունակել խաղալ, և դժվար է խաղը դադարեցնելը»: Սա երեխային օգնում է զգալ, որ իրեն հասկանում են:

2. *Ծնողը պահպանում է կանոնը, բայց առանց սպառնալիքի:*

«Հիմա խաղի ժամանակն ավարտվում է, և խաղալիքները պետք է հավաքենք»: Սահմանը հստակ է, բայց ձայնի տոնը՝ հանգիստ:

3. *3-5 փարեկան երեխաները լավ են արձագանքում ընտրությանը:*

«Ուզո՞ւմ ես՝ դու մեքենաները հավաքես, իսկ ես՝ կոնստրուկտորը, թե՛ հակառակը»: Երեխան զգում է վերահսկողություն իրավիճակի վրա:

4. *Եթե երեխան շարունակում է դժվարանալ...*

«Եկ միասին սկսենք, ես առաջինը կվերցնեմ մեկ խաղալիք»: Ծնողը ցույց է տալիս վարքը, ոչ թե միայն պահանջում:

5. *Գործողությունից հետո խրախուսեք, գովեք ոչ թե անձը, այլ ջանք գործադրելու համար:*

«Դու կարողացար հավաքել խաղալիքները, թեև դժվար էր: Դա շատ կարևոր հմտություն է»: Զարգացնում է ինքնագնահատականն ու պատասխանատվությունը:

ԻՐԱՎԻՃԱԿ 2.

Երեխայի տարիքը՝ 3,5 տարեկան

Դժվարությունը՝ Երեխան համառորեն հրաժարվում է հագնել բաճկոնը և կրկնում է. «ԶԵՄ ՀԱԳՆՈՒՄ»:

Սոցիալ-մանկավարժական տեսանկյունից ծնողի գրագետ վարք

1. «Տեսնում եմ՝ չես ուզում բաճկոն հագնել, երևի անհարմար է թվում»: Այս կերպ ընդունում է երեխայի զգացմունքը:
2. «Դրսում ցուրտ է, և բաճկոնը մեզ տաք է պահում»: Այս կերպ տալիս է տարիքին համապատասխան կարճ բացատրություն:
3. «Ուզում ես կապո՞ւյտ բաճկոնը հագնել, թե՞ կարմիրը»: Այս կերպ երեխային ընտրելու հնարավորություն է տալիս: Համառությունը այս տարիքում ինքնուրույնության զարգացման նշան է: Ընտրության հնարավորությունը նվազեցնում է պայքարը և օգնում է երեխային համագործակցել:
4. «Եկ հաշվենք մինչև 10, հետո կհագնվենք»: Այս կերպ որոշակի ժամանակ է տալիս երեխային, ընդգրկում գործողության մեջ:

ԻՐԱՎԻՃԱԿ 3.

Երեխայի տարիքը՝ 4 տարեկան

Դժվարությունը՝ Տանը նորածին քույր/եղբայր կա: Երեխան ասում է. «Մամային ես եմ ուզում, փոքրիկին մի գրկիր»:

Սոցիալ-մանկավարժական տեսանկյունից ծնողի գրագետ վարք

1. «Դու վատ ես զգում, որովհետև ուզում ես, որ մաման քեզ հետ լինի»: Այս կերպ անվանում է երեխայի զգացմունքը:
2. «Դա նորմալ է, շատ երեխաներ են այդպես զգում»: Այս կերպ ընդունում է երեխայի զգացմունքը:
3. «Ես պիտի հոգ տանեմ փոքրիկի մասին, բայց նաև շատ եմ սիրում քեզ»:
4. «Երբ փոքրիկը քնի, մենք երկուսով գիրք կկարդանք»: Այս կերպ ժամանակ է առանձնացնում ավագի համար:

Խանդը առաջանում է **ուշադրության կորստի վախից**: Ընդունումը և անհատական ժամանակը նվազեցնում են լարվածությունը:

ԻՐԱՎԻՃԱԿ 4.

Երեխայի տարիքը՝ 5 տարեկան

Դժվարությունը՝ Երեխան զայրացած հարվածում է մեկ այլ երեխայի, որովհետև իր խաղալիքը վերցրել են:

Սոցիալ-մանկավարժական տեսանկյունից ծնողի գրագետ վարք

1. «Դադարեցրու, հարվածել պետք չէ»: Անմիջապես կանգնեցնել վարքը (հանգիստ, վստահ):

2. «Դու շատ զայրացար, որովհետև խաղալիքը քոնն էր»: Այս կերպ ճանաչում է զգացմունքը:
3. «Երբ զայրանում ես, կարող ես ասել՝ «Դա իմ խաղալիքն է» կամ ինձ կանչել»: Այս կերպ իրականացվում է այլընտրանքային վարքի ուսուցում:
4. «Ի՞նչ կարող ենք անել հաջորդ անգամ»: Այս կերպ ապահովվում է հետադարձ քննարկում:

Ագրեսիայի պատճառը հաճախ զգացմունք արտահայտել չկարողանալն է: Երեխան սովորում է, որ զգացմունքը ընդունելի է, բայց վնասող վարքը՝ ոչ:

ԻՐԱՎԻՃԱԿ 5.

Երեխայի տարիքը՝ 3 տարեկան

Դժվարությունը՝ Երեխան վախենում է մութ սենյակից և չի ուզում մենակ քնել:

Սոցիալ-մանկավարժական տեսանկյունից ծնողի գրազետ վարք

1. «Դու վախեցար մթությունից, ես քեզ հասկանում եմ»:
2. Ցանկալի չէ վախի ազդեցությունը նվազեցնել, ծաղրել: Չի կարելի ասել՝ «Դա հիմար բան/վախ է», այլ պետք է հստակեցնել՝ «Քեզ համար դա իսկական վախ է»:
3. «Ես այստեղ եմ, դու ապահով ես» արտահայտությամբ առաջացնում է անվտանգության զգացում:
4. Գիշերային լույս, դուռը՝ կիսաբաց, սիրելի խաղալիք ու նման այլ քայլերով փորձ է արվում հաղթահարել վախը:

Վախերը այս տարիքում նորմալ են երևակայության ակտիվ զարգացման պատճառով: Ծնողի աջակցությունը ձևավորում է վստահություն, ոչ թե կախվածություն:

ԻՐԱՎԻՃԱԿ 6.

Երեխայի տարիքը՝ 12–13 տարեկան

Դժվարությունը՝ Երեխան ստացել է ցածր գնահատական մաթեմատիկայից և խուսափում է խոսել կամ ասում է՝ «Ես էլի վատ եմ գրել... միևնույնն է, ես դա չեմ կարողանում»:

Սոցիալ-մանկավարժական տեսանկյունից ծնողի գրագետ վարք

1. Առաջին և ամենակարևոր քայլը ոչ թե գնահատականին արձագանքելն է, այլ երեխային. «Տեսնում եմ՝ քեզ դա անհանգստացնում է», «Թվում է՝ հիասթափված ես»: Այս կերպ ընդունում է անհանգստությունը, հույզը, իսկ երեխան զգում է, որ իրեն հասկանում են, նվազում է պաշտպանողական վարքը (լռելը, խուսափելը), ստեղծվում է վստահության մթնոլորտ:
2. Պետք չէ ասել՝ «Ինչո՞ւ ես այդքան անհանգստանում», «Դա լուրջ բան չէ»: Այս արտահայտությունները մերժում են երեխայի զգացմունքները:
3. Պետք է խուսափել մեղադրանքից, այս տարիքում երեխաները շատ զգայուն են ինքնագնահատականի նկատմամբ: Ցածր գնահատականը նրանք հաճախ նույնացնում են իրենց արժեքի հետ:

4. Պետք չէ ասել՝ «Դու մաթեմատիկա չես հասկանում», «Եթե սովորեիր, այդպես չէր լինի»: Այս խոսքերը կարող են առաջացնել «ես անկարող եմ» ինքնագնահատական:
5. Սոցիալ-մանկավարժական տեսանկյունից գրագետ մոտեցում է՝ խնդիրը դիտարկել որպես իրավիճակ, ոչ թե երեխայի հատկանիշ, առանձնացնել այն երեխայի գնահատականից:
6. «Եկ փորձենք հասկանալ՝ ինչն է դժվար եղել: Քո կարծիքով՝ թեմա՞ն էր բարդ, թե՞ ժամանակը չբավականացրեց»: Այս կերպ փորձում է հույզերից անցում կատարել իմաստավորման, պատճառահետևանքային կապերի բացահայտման, ինքնագնահատման: «Հիմա դեռ դժվար է, բայց դա չի նշանակում, որ միշտ այդպես կլինի», «Շատ երեխաներ այս թեմայում դժվարանում են, հետո կամաց-կամաց առաջ են գնում»:
7. Ծնողը ոչ թե տալիս է պատրաստի լուծումներ, այլ ներգրավում է երեխային. «Ի՞նչ ես կարծում՝ ի՞նչը կարող է օգնել հաջորդ անգամ», «Ուզո՞ւմ ես՝ միասին կրկնենք, թե՞ ուսուցչից հարցնենք»: Այս դեպքում երեխան զգում է իր մասնակցությունը, աճում է պատասխանատվության և ինքնուրույնության զգացումը:
8. Զրույցի վերջում ամրապնդում է երեխայի վստահությունը. «Ես քո կողքին եմ, անկախ գնահատականից», «Մի գնահատականը չի որոշում քո կարողությունները»:

Մոտեցման սկզբունքներ

- Չմեղադրել, չպիտակավորել

- Ընդունել զգացմունքները
- Խնդիրը դիտարկել որպես լուծելի
- Զարգացնել ինքնավերլուծություն

ԻՐԱՎԻՃԱԿ 7.

Երեխայի տարիքը՝ 14 տարեկան

Դժվարությունը՝ Դեռահասը վիճել է դասընկերների հետ և չի ուզում գնալ դպրոց:

Երեխա՝ «Ես այլևս չեմ ուզում գնալ դպրոց, բոլորը իմ վրա ծիծաղում են»:

Սոցիալ-մանկավարժական տեսանկյունից ծնողի գրագետ վարք

1. «Դժվար է, երբ քեզ այդպես են վերաբերվում», «Բնական է, որ հիմա չես ուզում գնալ դպրոց»: Այս կերպ ընդունում է հույզը, ոչ թե գնահատում է իրավիճակը: Երեխան զգում է, որ իր ապրումները լուրջ են, նվազում է միայնության և անպաշտպանության զգացումը, ստեղծվում է վստահության հիմք հետագա զրույցի համար: Խորհուրդ չի տրվում ասել՝ «Ուշադրություն մի դարձրու», «Դա կանցնի»: Այս արտահայտությունները նվազեցնում են դեռահասի ապրումների արժեքը:
2. «Կուզե՞ս պատմել՝ ինչ է տեղի ունեցել: Ես քեզ լսում եմ»: Այս կերպ փորձում է հույզերից անցում կատարել իմաստավորման, պատճառահետևանքային կապերի բացահայտման, լսում է երեխային: Խորհուրդ չի տրվում ընդհատել նրան, քննադատել, նաև՝ ուրիշներին: Արդյունքում՝ երեխան կարողանում է խոսքերով

արտահայտել իր ապրումները, զարգանում է նրա ինքնարտահայտման և ինքնագիտակցության կարողությունը, ծնողը ստանում է իրավիճակի ամբողջական պատկերը:

3. Լսելուց հետո՝ «Եկ մտածենք՝ ինչ կարող ենք անել, որ քեզ ավելի ապահով զգաս դպրոցում: Կարող ենք միասին խոսել դասղեկի հետ կամ փորձել այլ լուծում»: Այս կերպ առաջարկում է համագործակցել, հարգում է երեխայի ընտրությունը իր խնդիրների լուծման հարցում:

Մոտեցման սկզբունքներ

- Ակտիվ լսում
- Զգացմունքային աջակցություն
- Համագործակցային լուծում
- Երեխայի ընտրության հարգում

Դեռահասության տարիքում համակրանքը, խմբում ընդունված լինելը և հեղինակությունը շատ կարևոր են: Ծիծաղի, ծաղրանքի կամ մերժման զգացումը կարող է ընկալվել որպես անձնական արժանապատվության խաթարում, ինչի հետևանքով երեխան խուսափում է դպրոցից՝ որպես իրեն ցավ պատճառող միջավայրից:

ԻՐԱՎԻՃԱԿ 8.

Երեխայի տարիքը՝ 13-15 տարեկան

Դժվարությունը՝ Երեխան դժգոհ է իր արտաքինից, իջել է ինքնագնահատականը:

Երեխա՝ «Ես ինձ չեմ սիրում, բոլորը ինձնից լավ տեսք ունեն»:

Սոցիալ-մանկավարժական տեսանկյունից ծնողի գրագետ վարք

1. Սկզբում արձագանքում է ոչ թե կարծիքին, այլ զգացողությանը: «Դեռահասության շրջանում շատերն են նման զգացողություններ ունենում: Շատ բնական է, որ դու քեզ համեմատում ես մյուսների հետ»: Ցույց է տալիս, որ երեխայի ապրումը «թույլատրելի» է: Այս կերպ նորմալիզացնում է հույզը, չի ասում՝ «Դա մանր բան է», «անցողիկ է», «մի մտածիր»:
2. «Կարևոր է հիշել, որ քո արժեքը միայն արտաքինով չի որոշվում»: Այս կերպ ուշադրությունը մեղմորեն տեղափոխում է արտաքինից դեպի ամբողջական ինքնություն: Խոսում է ընդհանուր արժեքների մասին:
3. «Ի՞նչն ես դու քո մեջ գնահատում»: Այս կերպ փորձում է առանձնացնել, վեր հանել երեխայի ուժեղ կողմերը:
4. Եթե երեխան դժվարանում է պատասխանել, ծնողը կարող է օգնել. «Ես, օրինակ, նկատում եմ, որ դու շատ հոգատար ես ընկերներիդ նկատմամբ»:

Մոտեցման սկզբունքներ

- Նորմալիզացնել զգացումները
- Չնվազեցնել խնդիրը
- Ընդգծել ուժեղ կողմերը
- Խթանել ինքնընդունումը

ԻՐԱՎԻՃԱԿ 9.

Երեխայի տարիքը՝ 15 տարեկան

Դժվարությունը՝ Երեխան շատ ժամանակ է անցկացնում սոցիալական ցանցերում, չափից շատ է օգտագործում հեռախոսը:

Սոցիալ-մանկավարժական տեսանկյունից ծնողի գրագետ վարք

1. Նախ դիտարկում է, թե երբ է երեխան օգտագործում հեռախոսը, ինչի հաշվին է դա արվում (քուն, դասեր, շփում), ոչ թե անմիջապես արձագանքում:
2. Փորձում է հասկանալ պատճառը, ոչ թե սուս փաստը:
3. Ընտրում է հարմար պահ՝ ոչ վիճաբանության, ոչ էլ հոգնած ժամանակ: «Ես նկատում եմ, որ հեռախոսը շատ ժամանակ է խլում քեզնից: Հեռախոսով ամենաշատը ի՞նչ ես անում»:
4. Լսելուց հետո՝ «Ի՞նչ կասես, եթե միասին որոշենք՝ օրվա ընթացքում ինչքան ժամանակ է հարմար հեռախոսից օգտվել, որ նաև հանգստանաս ու քո գործերը հասցնես»:

Մոտեցման սկզբունքներ

- Կտրուկ չարգելել
- Խոսել, ոչ թե հրահանգել
- Սահմաններ հստակեցնել համաձայնության միջոցով
- Խթանել պատասխանատվության զարգացում

ԻՐԱՎԻՃԱԿ 10. Զգացմունքային փակվածություն

Երեխայի տարիքը՝ 15 տարեկան

Դժվարությունը՝ Երեխան լռակյաց է, չի կիսվում:

Սոցիալ-մանկավարժական տեսանկյունից ծնողի գրագետ վարք

1. Ընտրում է հանգիստ պահ:
2. Նստում է երեխայի կողքին, բայց ոչ անմիջապես դիմացը, որպեսզի նրա դիրքը երեխայի կողմից սպառնալից չընկալվի:
3. Խոսում է մեղմ, հանգիստ ձայնով, պահպանում է աչքերի բնական կոնտակտ, բայց չի ստիպում:
4. «Վերջերս ավելի լուռ ես: Եթե ուզենաս խոսել, ես միշտ պատրաստ եմ լսել առանց դատելու»:

Մոտեցման սկզբունքներ

- Անվտանգ միջավայր ստեղծել
- Չճնշել խոսելու համար
- Ամրապնդել վստահությունը
- Հարգել երեխայի անձնական սահմանները

ԻՐԱՎԻՃԱԿ 11.

Երեխայի տարիքը՝ 13-15 տարեկան

Դժվարությունը՝ Երեխան ասում է, որ դպրոց գնալն «իմաստ չունի», չի ցանկանում սովորել, նվազել է մոտիվացիան: «Դպրոց գնալն իմաստ չունի, միևնույն է՝ ինձ դա պետք չի լինելու»:

Սոցիալ-մանկավարժական տեսանկյունից ծնողի գրագետ վարք

1. Չի ընդունում խոսքը որպես անհարգալից վերաբերմունք:
2. Հասկանում է, որ սա հաճախ հիասթափության, հոգնածության կամ չհասկացված լինելու նշան է:
3. Որոշում է պարզել պատճառը, ոչ թե «ուղղել» կարծիքը:
4. «Շատ դեռահասներ նման զգացողություն ունենում են, հատկապես երբ հոգնած կամ հիասթափված են»: Այս կերպ ընդունում և արձագանքում է զգացողությանը, ոչ դատողությանը, ցույց է տալիս, որ նման մտքեր այս տարիքում հանդիպում են:
5. «Ի՞նչն է քեզ ամենաշատը հիասթափեցնում դպրոցում»: Լսում է մինչև վերջ, չի ընդհատում և չի շտկում երեխայի կարծիքը լսելու ընթացքում:
6. «Կարծես հիմա դպրոցը քեզ ավելի շատ ծանրություն է թվում, քան հնարավորություն»: Այս կերպ խնդիրը ներկայացնում է որպես ընթացիկ փուլ:
7. «Դպրոցը միշտ չէ, որ միայն որևէ առարկայի, գիտության, մասնագիտության մասին է, այն նաև օգնում է հասկանալ՝ ինչն ես սիրում, ինչ հարցում ես դժվարանում»: Այս կերպ օգնում է տեսնել սովորելու իմաստը լայն առումով:
8. «Ի՞նչ կարող ենք փոխել, որ դպրոցն ավելի տանելի լինի քեզ համար»: Այս կերպ առաջարկում է միասին մտածել փոփոխությունների մասին, թույլ է տալիս երեխային առաջարկել լուծումներ:

9. «Եկ այս շաբաթ կենտրոնանանք միայն երկու առարկայի վրա»: Այս կերպ սահմանում է փոքր նպատակներ, միանգամից առաջընթաց չի պահանջում, ապահովում է հետադարձ կապ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա: Ընդունվել է 20.11.1989թ.: <https://www.arlis.am/hy/acts/60503>
2. Թոփուզյան Ա.Օ. և ուրիշ., (2018), Տեղեկատվական տեխնոլոգիաները տարրական դպրոցում: Ուսումնամեթոդական ձեռնարկ մանկավարժների և ծնողների համար: -Եր., Մանկավարժ հրատ., էջ 55-59:
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022թ.-ի հունվարին: 5.Սոցիալ-ժողովրդագրական հատված: Հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակը և բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեությունը 2021 թվականին: https://armstat.am/file/article/sv_01_22a_530.pdf: Դիտվել է 21.09.2023թ.:
4. ՀՀ կառավարության 2.09.2016թ.-ի N 34 արձանագրային որոշում:
5. Геворкян, С.Р. (2023). Проблема детства в контексте современных вызовов системы образования. Актуальная психология. Научный вестник, 2(13), 56-68. <https://doi.org/10.46991/SBMP/2023.6.2.056> Gevorkyan, S.R. (2023). The Problem of Childhood in the Context of Modern Challenges of the Education System (In Russ.). Psychology. Scientific Bulletin, 2(13), pp. 56-68. <https://doi.org/10.46991/SBMP/2023.6.2.056>
6. Князев Н.Н., (2020), Феномен современного детства и понимание его границ // Наука о человеке: гуманитарные исследования Т.14, № 2/2020. стр. 63-66. DOI: 10.17238/issn1998-5320.2020.14.2.10

7. Мудрик А.В. (2009). Введение в социальную педагогику. Изд. 2-е, перераб. – М.: Московский психолого-социальный институт, – С. 78.
8. Фельдштейн Д.И., (2009). Современное детство: проблемы и пути их решения // Вестник практической психологии образования №2(19) апрель-июнь. Стр. 28-32.
9. Seemiller C., Grace M., Generation Z Goes to College. San Francisco: Jossey-Bass, 2015.

Թաղևոսյան Հ. Վ.


**ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ՁԵՌՆԱՐԿ ԾՆՈՂԻ ՀԱՄԱՐ

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 70:

Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում:

Երևան, Դ. Մալյան 43



ՀԱԿ
ՀԱՆՐԱՅԵՏՅԱՆ
ՄԱՆԿԱԲՈՒՆԵՆԴՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ



www.hmk.am